

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

14 հունիսի 2002 թ.
ք. Երևան

N 182-Մ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՅԻՆ ՏԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգին» համապատասխան

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի նախագծերի ներկայացման կարգ»-ը:
2. Նախարարության գիտության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչությանը (պետ՝ Ա. Թռչունյան)՝ սույն կարգը 3-օրյա ժամկետում գրանցման ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:
3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ պրն. Ա. Ավետիսյանին:

Նախարար՝

Լ.Մկրտչյան

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՅԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ**

Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 4-րդ կետի «գ» և 5-րդ կետի «ժ» ենթակետերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1121 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգին» համապատասխան սույնով սահմանվում է հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման ծրագրերի նախագծերի (այսուհետև՝ ծրագրերի նախագծեր) ներկայացման կարգը:

2. Ծրագրերի նախագծերը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետև՝ նախարարություն) հրավերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետև՝ պատասխանատու մարմիններ) նախարարություն են ներկայացնում համապատասխան ծրագրերի նախագծերն իրենց նախահաշիվներով:

**ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ**

3. Հիմնարար հետազոտությունների ծրագրերի նախագծերն ընդունվում են միայն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ) դրական կարծիքի հիման վրա:

4. ՀՀ ԳԱԱ-ն, ստանալով ծրագրերի նախագծերը, 7-օրյա ժամկետում քննարկում և տալիս է իր կարծիքը համապատասխան պետական կառավարման մարմնին:

5. Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի նախագծերը պետք է պարունակեն տեղեկություններ.

- ա) առաջարկվող ծրագրերի արդիականության,
- բ) նպատակների և խնդիրների,
- գ) կատարման ժամկետների և ծավալների,

դ) ակնկալվող արդյունքների,
ե) ավարտական ձևերի (հաշվետվություն, արտոնագրեր, ներդրման հաշվետվություն) վերաբերյալ, և ունենան կից նախահաշիվներ:

6. Նախարարությունը հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի նախագծերը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում համակարգում է դրանք և տրամադրում համապատասխան մասնագիտական փորձագիտական խորհուրդներին, որոնք գործում են համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 20.11.01 թ. N 522-Մ հրամանով հաստատված «Մասնագիտական փորձագիտական խորհուրդների ձևավորման կարգի»:

7. Մասնագիտական փորձագիտական խորհուրդները, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 24.12.01 թ. N 562 -Մ հրամանով հաստատված աշխատակարգի, 10-օրյա ժամկետում իրականացնում են նախագծերի փորձաքննությունը:

8. Դրական եզրակացություն ստացած նախագծերը նախարարության կողմից 5-օրյա ժամկետում սահմանված կարգով ամփոփվում են և ներկայացվում համապատասխան պատասխանատու մարմիններին:

9. Պատասխանատու մարմիններն 5-օրյա ժամկետում կարող են նախարարություն ներկայացնել իրենց նկատառումները ֆինանսավորման չերաշխավորված ծրագրերի նախագծերի վերաբերյալ: Նախարարությունը 3-օրյա ժամկետում համակարգում է դրանք և ներկայացնում համապատասխան մասնագիտական փորձագիտական խորհրդին, որը 3-օրյա ժամկետում տալիս է իր վերջնական եզրակացությունը:

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

10. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի նախագծերը քննարկելու նպատակով նախարարությունը ստեղծում է հանձնաժողով, որի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (նախագահ), նախարարի տեղակալը, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտը և համապատասխան նախարարների տեղակալները, նախարարության գիտության և գիտամանկավարժական կադրերի պատրաստման վարչության պետը (քարտուղար):

11. Մտանալով ծրագրերի նախագծերը նախարարությունը 3-օրյա ժամկետում համակարգում է դրանք և ներկայացնում հանձնաժողովին:

12. Հանձնաժողովը 5-օրյա ժամկետում որոշում է կայացնում ծրագրերի նախագծերը ֆինանսավորման ներկայացնելու վերաբերյալ:

**ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

13. Գիտական կադրերի պատրաստման ծրագրերի նախագծերը մշակվում են պատասխանատու մարմինների կողմից, ներկայացվում են նախարարություն և իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. հուլիսի

20-ի N 662 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում
ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգ»-ին
համապատասխան:

**ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

14. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների ցանկը կազմվում է նախարարության կողմից՝ ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ:

15. Ծրագրերի նախագծերը ստանալուց հետո նախարարությունը 5-օրյա ժամկետում համակարգում է դրանք և ներկայացնում ՀՀ ԳԱԱ կարծիք ստանալու համար: ՀՀ ԳԱԱ-ի կողմից կարծիքները տրամադրվում են 5-օրյա ժամկետում:

16. Կարծիքներ ստացած նախագծերը 3-օրյա ժամկետում քննարկվում են նախարարությունում և ամփոփվում ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների ցանկի ձևով: